Հավելված
ՀՀ կառավարության 2013 թվականի
փետրվարի 7-ի N 99 - Ն որոշման

Ս Տ Ո Ւ Գ Ա Թ Ե Ր Թ N ___

# ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ

Ստուգման սկիզբը
20 թ. ________________ ________
*(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)*

Ստուգման ավարտը
20 թ. ________________ ________
*(տարեթիվը, ամիսը, ամսաթիվը)*

Ստուգման հիմքն է_____________________________________________
_____________________________________________
_____________________________

Ստուգման ենթակա հարցերի շրջանակը՝ համաձայն ձևի ___________________
_____________________________________________
_____________________________

Ստուգվող աուդիտ իրականացնող անձի

անվանումը ____________________________________

գտնվելու վայրը ________________________________

լիցենզիան տալու ամսաթիվը _______________________

լիցենզիայի համարը ____________________________

այլ կոնտակտային տվյալներ _______________________

ՀՎՀՀ-ի ծածկագիրը՝ GGGGGGGG

Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձինք՝

__________________________________ GGGGGG
*(պաշտոնը)* *(ծառայողական վկայականի համարը)*

__________________________ ______________
*(ազգանունը, անունը, հայրանունը)* *(ստորագրությունը)*

__________________________________ GGGGGG
*(պաշտոնը)* *(ծառայողական վկայականի համարը)*

__________________________ ______________
*(ազգանունը, անունը, հայրանունը)* *(ստորագրությունը)*

__________________________________ GGGGGG
*(պաշտոնը)* *(ծառայողական վկայականի համարը)*

_______________________________________ _______________________

*(ազգանունը, անունը, հայրանունը)* *(ստորագրությունը)*

Ստուգվող աուդիտ իրականացնող անձի ղեկավար կամ լիազորված անձ _______________________________ ________________

*(ազգանունը, անունը, հայրանունը)* *(ստորագրությունը)*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ձև

# Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

## ԱՈՒԴԻՏ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԱՈՒԴԻՏՈՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

| NN ը/կ | Հարցը | Այո | Ոչ | Չ/պ | Կշիռը | Մեկնաբանու-թյունները | Ստուգման տեսակը | Հարցի համար հիմք հանդիսացող իրավական նորմը |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 1. | Աուդիտ իրականացնող անձի կողմից ներկայաց-ված լիցենզավորմանը վերաբերող փաստաթղթերը զերծ են եղել արդյոք էական նշանակություն ունե-ցող կեղծ կամ խեղաթյուրված տեղեկատվությունից | | | | 4 | | Փաստաթղթային | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետ |
| 2. | Լիցենզիայի պայման ապահովող աուդիտորներին առնչվող փաստաթղթերում առկա տեղեկությունը համապատասխանում է արդյոք նրա կողմից ՀՀ ֆինանսների նախարարություն ներկայացված տեղեկությանը | | | | 3 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված,<br>ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N 499-Ն որոշում |
| 3. | Պահպանվել է արդյոք աուդիտ իրականացնող անձի հիմնադիրների (մասնակիցների) առնվազն 50 տոկոսն աուդիտոր լինելու և կանոնադրական կապիտալի առնվազն 50 տոկոսը նրանց պատկանելու պահանջը | | | | 3 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդված |
| 4. | Գործադիր տնօրենի, ինչպես նաև առկայության դեպքում՝ կոլեգիալ գործադիր մարմնի անդամների, խորհրդի անդամների և նախագահի փոփոխու-թյուն կատարելու համար ստացել է արդյոք լիազորված մարմնի հաստատումը՝ օրենքով սահմանված պահանջներին կազմակերպության ղեկավարի համապատասխանության վերաբերյալ | | | | 2 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «ժա» կետ |
| 5. | Պահպանվել է արդյոք աուդիտորական գործունեու-թյունից և օրենքով սահմանված թույլատրելի | | | | 4 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքի 12-րդ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ծառայություններից բացի ձեռնարկատիրական որևէ այլ գործունեությամբ չզբաղվելու վերաբերյալ պահանջը | | | | | | | հոդվածի 1-ին մաս |
| 6. | Աուդիտի ենթարկվող անձին հաշվապահական հաշվառման ներդրման, վերականգնման և վարման, ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների կազմման, ակտիվների և (կամ) պարտավորությունների և (կամ) իրավաբանական անձի բաժնետոմսի գնահատման, հարկերի, տուրքերի և պարտադիր այլ վճարների պլանավորման ու հաշվարկման, կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերլուծության ծառայություններ մատուցված լինելու դեպքում պահպանվել է արդյոք տվյալ ժամանակաշրջանը ներառող հաշվետու տարվա համար աուդիտորական ծառայություններ չմատուցելու վերաբերյալ պահանջը | | | | 3 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» կետ |
| 7. | Պահպանվել են արդյոք աուդիտ իրականացնող անձի և աուդիտորի անկախությունն ապահովելու համար սահմանված պահանջները, մասնավորապես. | | | | | | | |
| 7.1 | պահպանվել է արդյոք աուդիտորական կազմակերպության կողմից աուդիտորական ծառայություն չիրականացնելու պահանջը՝<br>• այն իրավաբանական անձին, որի ապահովադիրն է հանդիսանում (բացառությամբ պարտադիր ապահովագրության տեսակների) աուդիտորական կազմակերպությունը,<br>• այն իրավաբանական անձին, որի ապահովադիրն է հանդիսանում (բացառությամբ պարտադիր ապահովագրության տեսակների) աուդիտորական կազմակերպության կառավարման մարմնի կամ նման պարտականություններ կատարող այլ անձանցից, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից | | | | 1.5 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | որևէ մեկը,<br>• այն իրավաբանական անձին, որին փոխկապակցված անձ է հանդիսանում աուդիտորական կազմակերպության կառավարման մարմնի անդամներից կամ նման պարտակա-նություններ կատարող այլ անձանցից, ինչպես նաև նրանց ընտանիքի անդամներից որևէ մեկը,<br>• իրեն փոխկապակցված անձանց մոտ | | | | | | | |
| 7.2 | Պահպանվել են արդյոք աուդիտորի կողմից աուդիտորական ծառայություն չիրականացնելու պահանջը`<br>• այն իրավաբանական անձին, որի ապահովա-դիրն է հանդիսանում (բացառությամբ պարտադիր ապահովագրության տեսակների) աուդիտորը,<br>• իրեն փոխկապակցված անձանց մոտ | | | | 1.5 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 8. | Աուդիտ իրականացնող անձը վարում է արդյոք իր կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյան` ՀՀ կառավարության կողմից սահմանված կարգով | | | | 3 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետ, ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 122-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետ |
| 9. | Համապատասխանում է արդյոք լիազորված մարմին ներկայացված եռամսյակային հաշվետ-վություններում արտացոլված տեղեկատվությունն աուդիտ իրականացնող անձանց կողմից կնքված պայմանագրերի գրանցամատյանում գրանցված տեղեկատվությանը | | | | 3 | | Փաստաթղթային | ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 122-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 4-րդ կետեր |
| 10. | Համապատասխանում է արդյոք կնքված պայմա-նագրերի ժամանակագրական հերթականությունը պայմանագրերի հերթական համարներին | | | | 3 | | Փաստաթղթային | ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 122-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 4-րդ կետեր |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 11. | Համապատասխանում են արդյոք կնքված պայմանագրերով նախատեսված ծառայու-թյունների մատուցման ժամկետները գրանցա-մատյանում նշված իրական ժամկետներին | | | | 3 | | Փաստաթղթային | ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 122-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 4-րդ կետեր |
| 12. | Գրանցման ենթակա բոլոր պայմանագրերն են արդյոք գրանցվել գրանցամատյանում | | | | 4 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «է» կետ, ՀՀ կառավարության 2005 թվականի փետրվարի 3-ի N 122-Ն որոշմամբ հաստատված կարգի 1-ին կետ |
| 13. | Պահպանվել է արդյոք աուդիտորական ծառայությունների իրականացման լիցենզիայի գործողությունը կասեցված լինելու ժամանակահատվածում աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտորական ծառայություններ չիրականացնելու (աուդիտորական ծառայություն-ների իրականացման նոր պայմանագրեր կնքելու) պահանջը (խոսքը չի վերաբերում օրենքով սահմանված այն դեպքին, որի համաձայն նախատեսված հիմքերով լիցենզիայի գործո-ղությունը կասեցնելու դեպքում աուդիտ իրականացնող անձին չի արգելվում շարունակելու և ավարտելու միայն այն պայմանագրերի կատարումը, որոնց իրականացումը սկսվել է լիցենզիայի կասեցման վարույթը հարուցվելուց առաջ) | | | | 3 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մաս, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասեր |
| 14. | Պահպանվել է արդյոք լիցենզիայի պահանջներից որևէ մեկը խախտվելու դեպքում լիցենզիայի գործողությունը կասեցնելու նպատակով լիազորված մարմնին 30-օրյա ժամկետում գրավոր | | | | 2 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեու-թյան մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի «ե» կետ |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | տեղեկացնելու պահանջը | | | | | | | |
| 15. | Պահպանվել են արդյոք առանց լիցենզիայի աուդիտորական ծառայություն չիրականացնելու, ինչպես նաև աուդիտորական ծառայություններն առնվազն մեկ աուդիտորի կողմից իրականացվելու մասին պահանջները | | | | 3 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 16. | Պահպանվել է արդյոք աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտի և հարակից ծառայությունների իրականացումը փաստաթղթավորելու վերաբերյալ պահանջը | | | | 5 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 1-ին մաս,<br>ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1931-Ն որոշմամբ հաստատված ԱՄՍ 230 |
| 17. | Պահպանվել է արդյոք աուդիտորական եզրակացությունները, աուդիտորական հաշվետվությունները, աուդիտորի աշխատանքային փաստաթղթերը և աուդիտի անցկացման հետ կապված այլ փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով, բայց ոչ պակաս, քան աուդիտի անցկացմանը հաջորդող հինգ տարիների ընթացքում պահպանելու մասին պահանջը | | | | 2 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 18. | Պահպանվել են արդյոք աուդիտորական եզրակացությունն առնվազն երկու օրինակից կազմվելու, աուդիտի անցկացման համար պատասխանատու աուդիտորի կողմից ստորագրվելու և աուդիտ իրականացնող անձի ղեկավարի ստորագրությամբ հաստատվելու, ինչպես նաև աուդիտորական եզրակացության մեկ օրինակն աուդիտի ենթարկվող անձին տալու, իսկ մյուսն աուդիտ իրականացնող անձի մոտ մնալու վերաբերյալ պահանջները | | | | 2 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդված 2-րդ մասի 2-րդ պարբերություն |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 19. | Պահպանվել է արդյոք աուդիտորական ծառայությունների իրականացումից հրաժարվելու և պայմանագիրը վաղաժամկետ լուծելու դեպքում հրաժարվելու պատճառների մասին լիազորված մարմնին տաս աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պարտադիր աուդիտի դեպքում՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում տեղեկացնելու մասին պահանջը | | | | 2 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «գ.1»-րդ կետ |
| 20. | Պահպանվել է արդյոք տուգանքի կիրառումից հետո 3 տարվա ընթացքում տուգանքի կիրառման համար հիմք հանդիսացող խախտումը չշարունակելու կամ այդպիսի նոր խախտում թույլ չտալու պահանջը | | | | 4 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 31.3-րդ հոդվածի 3-րդ մաս |
| 21. | Պահպանվել է արդյոք աուդիտ իրականացնող անձի կողմից աուդիտորական գործունեության իրականացման ընթացքում ստացված և իր կողմից կազմված փաստաթղթերի ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության, այդ թվում՝ աուդիտորական գործունեության իրականացման մասին պայմանագրով սահմանված գաղտնի տեղեկությունների ցանկի պահպանման վերաբերյալ պահանջը | | | | 3 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի «դ» կետ |
| 22. | Պահպանվել է արդյոք հավաստի աուդիտորական եզրակացություն ներկայացնելու վերաբերյալ պահանջը | | | | 4 | | Փաստաթղթային | «Աուդիտորական գործունեության մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մաս |
| 23. | Պահպանվել է արդյոք, աուդիտ իրականացնող անձի կողմից լիցենզիայի վերաձևակերպման համար հիմք հանդիսացող փոփոխություն կատարելիս, սահմանված ժամկետում լիազոր մարմնին տեղեկացնելու պահանջը | | | | 1 | | Փաստաթղթային | «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մաս |
| 24. | Պահպանվել են արդյոք աուդիտորական կազմակերպությունում աշխատող (այդ թվում՝ քաղա- | | | | 4 | | Փաստաթղթային | ՀՀ կառավարության 2005 թվականի ապրիլի 21-ի N |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | քացիաիրավական պայմանագրով) աուդիտորների կողմից վարքագծին ներկայացվող պահանջները | | | | | | | 499-Ն որոշում |
| 25. | Ապահովվել է արդյոք աուդիտի որակի վերահսկողության համակարգի փաստա-թղթավորումը | | | | 5 | | Փաստաթղթային | ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1931-Ն որոշմամբ հաստատ-ված ՈՎՄՍ 1՝ կետեր 57,58,59 |
| 26. | Պահպանվել է արդյոք աուդիտ իրականացնող անձի կողմից համապատասխան հաշվետ-վությունները սահմանած ձևով, կարգով և ժամկե-տում ՀՀ կենտրոնական բանկ ներկայացնելու վերաբերյալ պահանջը | | | | 3 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 7-րդ հոդվածներ |
| 27. | Պահպանվել է արդյոք 10-ից ավելի աշխատող ունեցող աուդիտ իրականացնող անձի կողմից ՓԼ/ԱՖ կանխարգելման գործառույթը կարգավորող ներքին իրավական ակտ ունենալու պահանջը, որն առնվազն ներառում է պատշաճ և հավելյալ ուսումնասիրության կանոնները, տեղեկատվության պահպանման կարգը, ներքին աուդիտի և ներքին դիտարկումների մարմնի աշխատանքները, աշխատողների ընդունման և վերապատրաստման պայմանները, կասկածելի գործարքների ներքին չափանիշները, կասկածելի գործարքի կասեցման և ահաբեկչության հետ կապված անձանց ֆինանսա-կան միջոցների սառեցման ընթացակարգերը | | | | 2 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մաս և 3-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետ |
| 28. | Արդյոք 10-ից ավելի աշխատող ունեցող աուդիտ իրականացնող անձի կողմից ՓԼ/ԱՖ կանխար-գելմանն ուղղված ներքին իրավական ակտերից մեկական օրինակ հաշվետվություն տրամադրող անձինք դրանց հաստատման, ինչպես նաև դրանցում լրացումներ և փոփոխություններ կատա-րելու դեպքում 1 շաբաթյա ժամկետում տրամադրել են լիազոր մարմնին | | | | 2 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 2-րդ մաս |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 29. | Արդյոք աուդիտ իրականացնող անձի որևէ ներքին իրավական ակտի հիման վրա ներքին դիտարկումների մարմինն ստացել է ավագ ղեկավարության կարգավիճակ և անհրաժեշտ անկախություն և առկա չեն նշված որակները կաշկանդող խոչընդոտներ | | | | 2 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մաս |
| 30. | Արդյոք ներքին դիտարկումների մարմնի կողմից իրականացված ուսումնասիրություններն ամփոփ-վում են հաշվետվություններով և տրամադրվում աուդիտ իրականացնող անձի կառավարման բարձրագույն մարմնին | | | | 2 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 31. | Արդյոք աուդիտ իրականացնող անձի ներքին դիտարկումների մարմինն առնվազն յուրաքանչյուր կիսամյակը մեկ անգամ ուսումնասիրում է աուդիտ իրականացնող անձի, վերջինիս ստորաբաժանում-ների և աշխատողների գործունեությունը՝ օրենս-դրական, ենթաօրենսդրական և ներքին իրավա-կան ակտերի պահանջներին համապատասխանու-թյան տեսանկյունից | | | | 2 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մաս |
| 32. | Արդյոք աուդիտ իրականացնող անձի որևէ ներքին իրավական ակտի (օրինակ, ներքին կարգ, հրաման, հրահանգ և այլն) հիման վրա փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ներքին գործառույթը վերապահվել է աուդիտ իրականացնող անձի որևէ աշխատողի, ստորաբաժանմանը կամ համապատասխան մասնագիտացված գործունեություն իրականացնող այլ անձի կամ կազմակերպությանը | | | | 2 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 1-ին մաս |
| 33. | Արդյոք աուդիտ իրականացնող անձի կողմից իրականացվել են հավելյալ ուսումնասիրություններ օտարերկրյա պետություններում և տարածքներում գործող մասնաճյուղերին և ներկայացուցչություն- | | | | 2 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդված |

| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | ներին ներկայացվող պահանջների վերաբերյալ | | | | | | | |
| 34. | Արդյոք հաճախորդի հետ գործարար հարաբերու-թյան ավարտից հետո աուդիտ իրականացնող անձն առնվազն 5 տարի ժամկետով պահպանում է հաճախորդի նույնականացման և նրա հետ իրականացրած գործարքների տվյալները | | | | 2 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետ |
| 35. | Արդյոք աուդիտ իրականացնող անձն իրականացրել է հաճախորդի, նրա անունից հանդես եկող լիազորված անձի կամ իրական շահառուի պատշաճ ուսումնասիրություն | | | | 1 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդված |
| 36. | Արդյոք աուդիտ իրականացնող անձն իր կողմից սահմանված պարբերականությամբ թարմացրել է որևէ հաճախորդի հետ գործարար հարաբերության հաստատման արդյունքում ստացված նույնակա-նացման տվյալները | | | | 1 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդված |
| 37. | Արդյոք ահաբեկչության ֆինանսավորման կասկածի առկայության պարագայում աուդիտ իրականացնող անձը կասեցրել կամ մերժել է գործարքի իրակա-նացումը | | | | 1 | | Փաստաթղթային | «Փողերի լվացման և ահա-բեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդված |

Հարցաշարում «Այո», «Ոչ» և «Չ/պ» պատասխանների նշանակությունը

| | | | | |
|---|---|---|---|---|
| 1. | «Այո» - այո, առկա է, համապատասխանում է, բավարարում է | V | | |
| 2. | «Ոչ» - ոչ, առկա չէ, չի համապատասխանում, չի բավարարում | | V | |
| 3. | «Չ/պ» - չի պահանջվում, չի վերաբերվում | | | V |